7742

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար

Հակոբ Սիմիդյան

«08» 07 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 184 - 25

Նախաձեռնող՝ ***«ԷԿՈՆՈՄ ԷԿՈ» ՍՊԸ***
ք. Երևան, Կենտրոն, Թումանյան փողոց, շ. 8, 504 ս.

Գործունեությունը՝ ***Վարդենիս բնակավայրում թիվ 1 մանկապարտեզի չգործող երկհարկանի մասնաշենքի վերակառուցում***
Գեղարքունիքի մարզ

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 184 - 25

«08» հոկտեմբեր **2025թ.**

Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Վարդենիս բնակավայրում թիվ 1 մանկապարտեզի չգործող երկհարկանի մասնաշենքի վերակառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ԷԿՈՆՈՄ ԷԿՈ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթղթեր
Գործունեության տեսակը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Գեղարքունիքի մարզ, Վարդենիս համայնք, Վարդենիս բնակավայր

Ներածական մաս. «ԷԿՈՆՈՄ ԷԿՈ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված նախատեսվող գործունեության նպատակն է Վարդենիս բնակավայրում վերակառուցել թիվ 1 մանկապարտեզի չգործող երկհարկանի մասնաշենքը:

Նախատեսվող գործունեությունը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8)-րդ կետի գ. ենթակետի, դասակարգվում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Կառուցապատվող հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նկարագրական մաս. Ուսումնասիրվող տարածքը գտնվում է Գեղարքունիքի մարզում: Ռելիեֆը հիմնականում լեռնային է, ընդգրկում է Գեղամա և Վարդենիսի լեռնաշղթաների տարածքները: Բարձրություններն սկսվում են շուրջ 2000 մետրից և հասնում մինչև 3500 մետր՝ ներառելով Սևանա լճի արևելյան ափերին հարող վայրեր, և բարձրադիր լեռնագագաթներ, ինչպես օրինակ՝ Վարդենիսի լեռը:

Ուսումնասիրվող տարածքում գրունտային ջրեր առկա չեն:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ՝ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը, ճահճացումը, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ՝ բացակայում են:

Համաձայն հաշվետվության մեջ ներկայացված տեղեկատվության՝ նախատեսվող գործունեության տարածքը չի առնչվում բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների հետ: Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակներ և կենդանատեսակներ գործունեության ենթակա տարածքում չեն հայտնաբերվել:

Մանկապարտեզը հարթ տեղանքի վրա, տիպային նախագծով 1980-ական թվականներին կառուցված համալիր կառույց է՝ երկհարկանի, բաղկացած մի քանի մասնաշենքերից, որոնք իրար միացված են հակասեյսմիկ կարաններով: Չգործող մասնաշենքի վերակառուցումից հետո մանկապարտեզը կունենա 7 խումբ՝ նախատեսված 2-6 տարեկան երեխաների համար:

Սույն նախագծով նախատեսվում է վերակառուցել մանկապարտեզի չգործող մասնաշենքը, իրականացվելու է նոր տանիքի տեղադրում՝ բոլոր շենքերի համար, բացառությամբ գործող վերանորոգված մասնաշենքից:

Քանդվելու են հիմնական բոլոր հատակները, իրականացվելու են նոր հատակների կառուցում: Ապամոնտաժվելու են բոլոր փայտե, մետաղապլաստե և մետաղական դռները և պատուհանները և փոխարենը տեղադրվելու են նոր դռներ և պատուհաններ, փոխարինվելու են նաև ներքին պատուհանագոգերը:

Նախատեսվում է տանիքի փայտե կոնստրուկցիաների ամբողջովին ապամոնտաժում, այնուհետև ամրացման և նորոգման աշխատանքներն ավարտելուց հետո՝ նոր տանիքի մոնտաժում:

Նախատեսվում է վերակառուցման աշխատանքներից հետո իրականացնել արտաքին բարեկարգման աշխատանքներ՝ նոր սալվածքի, նոր ասֆալտապատ ճանապարհների կառուցում:

Էլեկտրամատակարարումն իրականացվելու է համաձայն՝ «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից տրամադրված տեխնիկական պայմանի:

Ջրամատակարարումն իրականացվելու է համաձայն՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից տրամադրված տեխնիկական պայմանի:

Կոյուղին միացված է համայնքային կոյուղատարին:

Գազամատակարարումն իրականացվելու է համաձայն՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի:

Մանկապարտեզի բոլոր սենյակներում իրականացվելու է օդափոխություն, որի համար օգտագործվելու են ցինկապատ օդատարեր:

Տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- հողամասի ընդհանուր մակերես՝ 14090 քմ,
- առկա շենքերի մակերեսը՝ 2374.2 քմ,
- վերակառուցվող մասնաշենքի մակերեսը՝ 517.55 քմ,
- կանաչապատման մակերես՝ 10700.65 քմ,
- բարեկարգում՝ 1015.15 քմ,
- նկուղային հարկի մակերես՝ 105.60 քմ:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատման աշխատանքներն իրականացվելու են Վարդենիսի համայնքապետարանի հետ համաձայնեցված: Նախատեսվող գործունեության ժամանակ կատարվելու է բնահողի հարթեցում՝ 6525 մ² մակերեսով:

Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված կլինեն փորման, բեռնման աշխատանքների, շինարարական տեխնիկայի շահագործման, բետոնային աշխատանքների հետ և այլն:

Մթնոլորտային արտանետումները կանխելու կամ նվազեցնելու նպատակով նախատեսվում է՝ շինարարական աշխատանքների ընթացքում ջրցանի իրականացում, շինհրապարակի ցանկապատում՝ համապատասխան բարձրության ցանցով, շինարարական տեխնիկայի վիճակի պարբերաբար ստուգում և կարգավորում, շինարարական նյութերի տեղափոխում փակ ծածկով (ծածկող պաստառների առկայությամբ) մեքենաներով, շինտեխնիկայի անվադողերի լվացում՝ շինհրապարակից դուրս գալուց առաջ, սորուն նյութերի պահեստների ծածկում՝ համապատասխան բարձրությամբ թաղանթով և այլն:

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվում է ջրցանի ծավալների հաշվարկում, որը չի առաջացնի մակերևութային հոսքեր և կբավականացնի միայն փոշենստեցման համար:

Հողային ռեսուրսների պահպանության համար.

- շինարարական նյութերը կտեղադրվեն հատուկ տակդիրների կամ բետոնապատ մակերեսների վրա,
- շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ,
- այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար, պետք է փռել ավազ կամ մանրախիճ: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսք, ապա պետք է բետոնասալը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով,
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն համայնքի կողմից հատկացված աղբավայր,
- տարածքը կբարեկարգվի և կմաքրվի շինաղբից:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում՝

- նախատեսվող գործունեության տարածքը և շրջակա միջավայրը զերծ պահել թափոնների կուտակումներից,
- կառուցապատման փուլում կենցաղային աղբի հեռացումը կատարվելու է կանոնավոր՝ ըստ անհրաժեշտության՝ մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով,
- հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները կրկնակի օգտագործել,
- անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելու ընթացակարգերը,
- վտանգավոր արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով պետք է մաքրել առաջացած հետքերը,
- շինաղբի տեղափոխումը կատարվելու է փակ ծածկով ապահովված բեռնատարներով կամ բեռնատարները ծածկվելու են անջրաթափանց պոլիէթիլենային թաղանթով,
- բացառվելու է աղբի կուտակումը շինհրապարակից դուրս՝ բնակելի և հասարակական տարածքներում,

- շինարարական աշխատանքների ավարտից հետո շինարարական նյութերի մնացորդները, վտանգավոր նյութերը հավաքվելու են հատուկ տարողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո հեռացվելու են Կապալառուի կողմից և այլն:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար անհրաժեշտ է՝ աղմկահարույց աշխատանքների իրականացում օրվա ցերեկային ժամերին, աղմուկի առաջացման ժամանակակից ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցների ներգրավում, ինչպես նաև դրանց շահագործում տեխնիկական նորմալ վիճակում, մեքենաների ապահովում համապատասխան խլացուցիչներով և այլն:

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակներ՝ հրդեհի առաջացում, շահագործվող տեխնիկայի հետ վթարներ և այլն: Հնարավոր ազդեցությունների բացառման և նվազեցման համար նախատեսվում են մի շարք միջոցառումներ, որոնք տրված են հաշվետվության համապատասխան բաժիններում:

Շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,
- փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրական 2-3 անգամ,
- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,
- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ:

Պատճառաբանական մաս. Հաշվետվության գնահատման և փորձաքննության փուլերում, օրենսդրությամբ սահմանված կարգով, Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքապետարանում անցկացված հանրային լսումների ժամանակ գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, Գեղարքունիքի մարզպետարանից, Վարդենիսի համայնքապետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողություններն ու առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակված տարբերակում:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարության ընթացքում ապահովել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը սահմանված ժամանակահատվածում:
2. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում առաջացող շինաղբի և թափոնների հեռացումն ու տեղափոխումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված վայր:
3. Կանաչապատումն իրականացնել համայնքի հետ համաձայնեցված՝ տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմաններին բնորոշ ծառաթփային բուսականությամբ՝ Կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N108-Ն որոշման պահանջներին համապատասխան:
4. Կառուցապատման աշխատանքների ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԷԿՈՆՈՄ ԷԿՈ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Վարդենիս բնակավայրում թիվ 1 մանկապարտեզի չգործող երկհարկանի մասնաշենքի վերակառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ Սևակ Մարկոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջին կարգի մասնագետ՝ Սվետլանա Կիզիրյան